

www.mesrobian.com

Արևմտահայկազերեն
և արևելահայկազերեն
լեզուների ուսուցում

260504

1982

NEW COOKING

Ցերեզային դաշտագոյ

Վարմեքս խոհարար
Արդիական խոհանոց

HAIR STYLING & MAKE UP

JEWELRY Design
DIAMOND Setting
WAX Molding
GEMOLOGY

TV - Video & Radio Repair

Car Electricity & Electronics

COMPUTER + INTERNET

25,000 LP/month

COMPUTER Hardware

NEW MCSE - CISCO

Java - Flash - Linux +
E-COMMERCE

Adobe - Oracle 9i ...

PROFESSIONAL IT TRAINING

MESROBIAN TECHNICAL COLLEGE

Երեք ուշ չէ
ուսանելու
համար

TICKETING IATA

English +

8 օրսը լեզուներ

NEW ACCOUNTING

ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԳՐՈՎ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

50,000 LP/month

B.T. LCCIEB

100,000 LP/month

Business Կրթություն
վկայականը Լոնդոնում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԱՐՈՒԵՍԻ ՊԵՏԱԿԱՆ «ԲԱՐԵԿԱՍՈՒԹԻՆ» ԱՆՍԱՄՊԼԸ

3 եւ 5 Հոկտեմբերին լիբանանահայ շուկայում կայանալիք «Բարեկամություն» անսամբլի զոյգ ելույթները: Համազգայինի Լիբանանի Շրջանային Վարչության կողմից Արամ 100ամեակի տոնակատարությունները ծրվանային համաժողովի ներքին և արտաքին հարցերի շրջանակներում կայանալիք «Բարեկամություն» պարախուժի պատմական ներկայացումը:

1987 թվականին կազմակերպված եւ շուրջ 40 պարողներով բաղկացած «Բարեկամություն» իր շուրջ կը համախմբէ Երեւանի պարուեստի ուսումնարանի շրջանաւարտները եւ պարի ոգին ու հոգիները թափանցող նուրբ եւ մասնագէտներ: Պարախուժի պատմական շարժումը պէտք է տարբերէր այլ խումբերէ, ունենար իր սեփական դիմագիծը:

Պարախուժի գեղարվեստական ղեկավար, Հայաստանի Հանրապետության վաստակավոր արուեստագէտ Նորայր

Մեհրաբեան իր գործը կը կատարէ խոստովանանք: Հոկտեմբեր եւ մեծ սիրով: Հայկական պարերուն նոր մշակումներ, աշխարհի ժողովուրդներուն հարուստ մշակույթը, դասական պարերուն ստեղծագործությունները եւ ինքնատիպ մեկնաբանություններ կազմեցին պարախուժին յայտագրին հիմքը: Բեմադրուեցան պարեր՝ օգտագործելով կոմիտասի, Ա. Նաչատուրեանի, Ա. Բաբայանի, Ինչպէս նաեւ՝ ժամանակակից այլ յորինողներու ստեղծագործությունները: Պարախուժի իր բեմադրությունները նաեւ մատուցեց ուսական, ուղեւորական, վրացական, արաբական, յունական, հնդկական եւ հայկական ազգագրական պարերու գունեղ շարքը: Պարախուժին յայտագրին կազմութեան մէջ վճռական դեր ունեցաւ Նորայր Մեհրաբեանի ստեղծագործական ինչնատիպ աշխատանքը: Զարմանալի երանգներով եւ բարձր ճարտարագիտութեամբ են բեմական տարագները, որոնք ձեւա-

ւորումը հեղինակութիւնն է Ռուբինա Յովհաննիսեանի: Պարախուժը ելույթ ունեցած է մեծ թիւով երկիրներու մէջ: Հանդիսատեսին հաճելի կը թուի անոր երիտասարդ շունչը, որուն շնորհիւ իւրաքանչիւր ելույթ կը վերածուի պարուեստի տօնի:

«Բարեկամություն» պարախուժը ելույթ ունեցած է հետեւեալ երկիրներուն մէջ.

- 1987 - Ռուսիա, Գերմանիա
- 1988 - Ռուսիա, Հնդկաստան, Եգիպտոս, Սրի Լանքա, Մէյլան
- 1989 - Ուրբանիա, Իտալիա
- 1990 - Ռուսիա
- 1991 - Սուրիա
- 1992 - Ռուսիա, Լիբանան
- 1994 - Ռուսիա, Միացեալ Նահանգներ
- 1995 - Միացեալ Նահանգներ
- 1996 - Ուրբանիա
- 1997 - Ուրբանիա, Ռուսիա
- 2000 - Գերմանիա
- 2001 - Իրան, Զինաստան, Ռուսիա
- 2003 - Ֆրանսա

ԼՈՒՐԵՐ՝ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՅ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ ԼԻԲԱՆԱՆԻ ԴԵՍՊՈՒՆԵՐԸ

Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոս Պիեթրոյի վանքին մէջ Երեւանի 16 Սեպտեմբեր 2003 թ. առաւօտուն ընդունեց Հունգարիոյ դեսպանը: Վեհափառ հայրապետին եւ դեսպանին միջեւ տեղի ունեցած խորհրդակցութիւնները առաւելաբար կեդրոնացան Լիբանանի ներքին կացութեան եւ Միջին Արեւելքի դիմագրաւած դժուարութիւններուն վրայ: Նաեւ խորհրդակցութեան նիւթ դարձաւ Հունգարիոյ Տայ համայնքի ներկայ վիճակը:

Նոյն օրը, վեհափառ հայրապետը ընդունեց Հայաստանի մէջ նոր նշանակուած Լիբանանի դեսպանը: Վեհափառ հայրապետը կարեւորութեամբ ընդգծեց Լիբանանի եւ Հայաստանի միջեւ գործակցութիւնը գարգացնելու ներառեցութիւնը: Նոր դեսպանը մօտէն ճանչնալով Հայ համայնքը եւ նաեւ Հայաստանը, խոստացաւ իր կարելին ընել նոր մղում տալու Հայաստանի եւ Լիբանանի դիւանագիտական յարաբերութեանց եւ տնտեսական ու մշակութային գործակցութեանց:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ ԱՍՏՆԱԳՈՒԹԻՆԸ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՍԻՋԱԶԱՅԻՆ ՀԱՍՏԱԳՈՒՄԱՐԻՆ (ԳԵՐՄԱՆԻԱ)

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. վեհափառ հայրապետը:

րապետի տնօրինութեամբ, Սպահանի Հայոց թեմի առաջնորդ Գերբա. Տ. Շահան Մ. վրդ. Սարգիսեան մասնակցեցաւ Ս. Իճիտիո համայնքի կողմէ կազմակերպուող խորհրդակցութեան Հայաստանում Միջազգային Համագործակցութեան Հաստատման 2003ին, Գերմանիոյ Ալթըր քաղաքին մէջ:

Ս. Իճիտիո համայնքը կազմուած է տարբեր ստիպարեցներու մէջ գործող աշխարհական երիտասարդներէ, քրիստոնէական ու հոգեւոր կեանքով պարող անձերէ, որոնք բազմատեսակ ծառայութիւններ կը մատուցեն՝ բարեգործական, դաստիարակչական, խաղաղամար եւ կը կազմակերպեն միջկրօնական երկխօսութիւններ աշխարհի տարբեր մասերուն մէջ: Յատկապէս վերջին 20 տարիներու ընթացքին, յարգական 17 միջազգային համագործակցութեան կը փորձեն մարդկութեան մէջ արթնցնել այն գիտակցութիւնը, որ կրօններ ու մշակութիւններ խաղաղութեան հաստատման ծառայող անհրաժեշտ միջոցներ են, եւ ոչ թէ պատերազմներու ու վայրագութեան պատճառներ:

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը վեհափառ հայրապետին զխաւորութեամբ, գործուն մասնակցութիւն ունեցած է եւ արտայայտած մեր եկեղեցւոյ կեանքը յուզող կարեւոր խնդիրները եւ մեր ժողովուրդի ար-

դար իրաւունքները: Շահան Մ. վարդապետ քաջի պայտօնական արարողութիւններէն, իր մշտական մասնակցութիւնը բերաւ, յատկապէս յիշեցնելով Հայկական Յեղափոխութեան ու Հայ Ժողովուրդի արդար իրաւունքներու ձեռքբերման հրամայականը: Այլ առիթով, հայր սուրբը մամուլի սպասարկութեանց հետ հանդիպում ունեցաւ եւ ներկայացուց իրանահայութեան ներկայ իրավիճակը: Համագործակցութեամբ վերջաւորութեան, Միջազգային խաղաղութեան կոչումը ստորագրեց ան մասնակցեցնելով Ս. Իճիտիոյ հետ եւ խորհրդակցութեամբ:

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒՄՆ ԶԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

- 8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
- 8:45.- «Աստղեր»
- 9:40.- «Առաւօտեան տոն»
- 11:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
- 3:00.- Արաբերէն յայտագիր. Խորագրոյ թղթերուն մասնագետ տողը. Դասսան ժըրնալի հետ. Կը խօսի Պէյրութի մէջ իրագործելիք «Պոլոն» ալ թուսն մասնակցութիւն ունեցած է եւ արտայայտած մեր եկեղեցւոյ կեանքը յուզող կարեւոր խնդիրները եւ մեր ժողովուրդի ար-

السؤال والى

ԻՆՉ ԿԸ ԳԻՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Զորքը 17 Սեպտեմբերին լոյս տեսած լիբանանեան օրաթերթերը իրենց ուշադրութիւնը առաւելաբար սեւեռած էին «Մատինա» դրամատան տագնապին վերաբացումը: Լիբանանեան մամուլը տեղական մակարդակի վրայ անդրադարձաւ եր նաեւ վարչական բարեկարգումներու եւ յետընտրական անդրադարձներուն վերաբերող հարցերու: Շրջանային եւ միջազգային մակարդակի վրայ մամուլին մէջ հիմնական տեղ կը գրաւէին Միացեալ Նահանգներու Քոնկրէսին կողմէ «Սուրիոյ հաշուետուութեան օրէնք»ին քննարկումը, պաղեստինցի ղեկավար Եասէր Արաֆաթը չհետաքննելու գծով արաբական որոշումին դէմ ամերիկեան վեթոյի հարցը եւ այլ հարցեր:

դատախաչ Ատնան Ատունը ըսած է, թէ դատական իշխանութիւնները մինչեւ վերջ պիտի շարունակեն «Մատինա» դրամատան տագնապին հարցը, իսկ միւս կողմէ, ներքին գործոց նախարարութիւնը կը յայտարարէ կը բարեկարգումները: Նախագահ Եր. Նաեւ վարչական բարեկարգումներու եւ յետընտրական անդրադարձներուն վերաբերող հարցերու: Շրջանային եւ միջազգային մակարդակի վրայ մամուլին մէջ հիմնական տեղ կը գրաւէին Միացեալ Նահանգներու Քոնկրէսին կողմէ «Սուրիոյ հաշուետուութեան օրէնք»ին քննարկումը, պաղեստինցի ղեկավար Եասէր Արաֆաթը չհետաքննելու գծով արաբական որոշումին դէմ ամերիկեան վեթոյի հարցը եւ այլ հարցեր:

առիթով արտաքին յարաբերութիւններու եւ ռազմապետական իշխանութիւնները մինչեւ վերջ պիտի շարունակեն «Մատինա» դրամատան տագնապին հարցը, իսկ միւս կողմէ, ներքին գործոց նախարարութիւնը կը յայտարարէ կը բարեկարգումները: Նախագահ Եր. Նաեւ վարչական բարեկարգումներու եւ յետընտրական անդրադարձներուն վերաբերող հարցերու: Շրջանային եւ միջազգային մակարդակի վրայ մամուլին մէջ հիմնական տեղ կը գրաւէին Միացեալ Նահանգներու Քոնկրէսին կողմէ «Սուրիոյ հաշուետուութեան օրէնք»ին քննարկումը, պաղեստինցի ղեկավար Եասէր Արաֆաթը չհետաքննելու գծով արաբական որոշումին դէմ ամերիկեան վեթոյի հարցը եւ այլ հարցեր:

Լստ «Նահար» օրաթերթին, Սպիտակ Տունը կը միանայ Քոնկրէսին յայտնելով, որ Սուրիոյ դէմ դրած գործելակերպը անընդունելի է: Դատախոս իր կարգին կը պատասխանէ: «Միացեալ Նահանգներու պահանջները բազմաթիւ են, իսկ մենք անոնցմէ կը գործադրենք կարելին»:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՎԵԹՕ՝ ԱՐԱԲՆԵՐՈՒՆ ԴԵՍ

Ի նպաստ Իսրայէլի կողմնակցութեան իբրեւ արդիւնք, Ռուսիայի ՄԱԿի Ապաթիւններու Խորհուրդին մէջ իր վեթոյ իրաւունքը գործածեց պաղեստինեան իշխանութիւններու ղեկավար Եասէր Արաֆաթի պարակցող որոշումի մը դէմ՝ այս անգամ կանաչ լոյս տալով իսրայէլեան նոր ոտնագործութիւններու համար: Այսպէս գրած էր «Տիար» օրաթերթը իր երէկուան թիւին մէջ: «Տիար» նաեւ իր առաջին էջին վրայ իրաւաբանական իրաւունքը խմբագրապետ Շարլ Էլուպի ստորագրութեամբ կրող խմբագրական մէկ ակնարկը՝ «Իսրայէլեան ամբողջական պատերազմ մը՝ ամերիկեան քաղաքականութեան միջոցով» խորագիրով:

«ՍՈՒՐԻՈՅ ՀԱՇՈՒԵՏՈՒԹԵԱՆ ՕՐԵՆՔ»

Շրջանային գետնի վրայ քաղաքական անկայուն մթնոլորտի մը մէջ Միացեալ Նահանգներու Քոնկրէսը պատասխանեց իսրայէլեան պատերազմի մը վերաբերող հարցերու: Լստ «Անուար» օրաթերթին, Դատախոս յայտարարած է, որ օրէնքին ետին կը կանգնի Իսրայէլը:

«ՍՈՒՐԻՈՅ ՀԱՇՈՒԵՏՈՒԹԵԱՆ ՕՐԵՆՔ»

Շրջանային գետնի վրայ քաղաքական անկայուն մթնոլորտի մը մէջ Միացեալ Նահանգներու Քոնկրէսը պատասխանեց իսրայէլեան պատերազմի մը վերաբերող հարցերու: Լստ «Անուար» օրաթերթին, Դատախոս յայտարարած է, որ օրէնքին ետին կը կանգնի Իսրայէլը:

«Սաֆիր» օրաթերթը կը գրէ, որ օրէնքին քննարկման Քոնկրէսի նիստը քիչ մնաց նմանի իսրայէլեան Քնեսէթի (խորհրդարան «Ա.») նիստերուն: Նիստին ընթացքին քննարկուած է նաեւ իրանահայ թղթաօրարը:

Միւս կողմէ, «Տիար» օրաթերթը կը յայտնէ, որ Միացեալ Նահանգներու արտաքին գործերու նախարար Քոլին Փաուլը նախատեսած է, որ օրէնքը ընդունելի Քոնկրէսին կողմէ: Սուրիոյ արտաքին գործերու նախարար Ֆարուք Շարէի ըսած է, թէ Սուրիա պատրաստ է հասկացողութեան գալու՝ իր կողմէ դրուած որոշ պայմաններով: «Տիար» նաեւ անդրադարձած էր այս

«ՍՈՒՐԻՈՅ ՀԱՇՈՒԵՏՈՒԹԵԱՆ ՕՐԵՆՔ»

Շրջանային գետնի վրայ քաղաքական անկայուն մթնոլորտի մը մէջ Միացեալ Նահանգներու Քոնկրէսը պատասխանեց իսրայէլեան պատերազմի մը վերաբերող հարցերու: Լստ «Անուար» օրաթերթին, Դատախոս յայտարարած է, որ օրէնքին ետին կը կանգնի Իսրայէլը:

«Սաֆիր» օրաթերթը կը գրէ, որ օրէնքին քննարկման Քոնկրէսի նիստը քիչ մնաց նմանի իսրայէլեան Քնեսէթի (խորհրդարան «Ա.») նիստերուն: Նիստին ընթացքին քննարկուած է նաեւ իրանահայ թղթաօրարը:

Միւս կողմէ, «Տիար» օրաթերթը կը յայտնէ, որ Միացեալ Նահանգներու արտաքին գործերու նախարար Քոլին Փաուլը նախատեսած է, որ օրէնքը ընդունելի Քոնկրէսին կողմէ: Սուրիոյ արտաքին գործերու նախարար Ֆարուք Շարէի ըսած է, թէ Սուրիա պատրաստ է հասկացողութեան գալու՝ իր կողմէ դրուած որոշ պայմաններով: «Տիար» նաեւ անդրադարձած էր այս

ՀԱՅ ԱՒԵՏ. Փ. ԵՒ Է. ԹՈՐՈՍԵԱՆ ՄԻՋՆ. ՎԱՐԺԱՐԱՆ

Հայ Աւետարանական Թորոսեան վարժարանը բացած է իր դռները աշակերտներու դիմաց: Արձանագրութիւնը արդէն սկսած է եւ կը շարունակուի մինչեւ Սեպտեմբեր 30: Երկուշաբթի Ուրբաթ առաւօտեան ժամը 8:00էն 1:00: Նորեկ աշակերտներ պարտին իրենց հետ բերել՝

- Նախորդ դասարանի վիճակացոյց
- Անձնագրի լուսապատճեն եւ լուսանկար մը
- Բարի վարուց վկայագիր
- Պետութեան մօտ աշակերտի թիւը, վաւերացած

Վերամուտ՝ Դեկտեմբեր 1 - Նախակրթարան եւ Միջնակարգ
Դեկտեմբեր 6 - Մանկապարտեզ
Դեկտեմբեր 13 առաւօտեան ժամը 8:00ին կը հրապարակուի Նախակրթարանի եւ Միջնակարգի ծնողները դպրոց իրենց գաւազներուն հետ ունենալու վերամուտի բացումը միասնաբար:
Դեկտեմբեր 20 առաւօտեան ժամը 8:00ին կը հրապարակուի Մանկապարտեզի ծնողները իրենց գաւազներուն հետ ունենալու վերամուտի գաւազներուն հետ ունենալու վերամուտը:

ՏԵՐԵՎԻԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՁԳԱՅԻՆ ՎԱՐժԱՐԱՆՆԵՐՈՒ ՏԱՐՈՒՄՆ ԱՌԻԹՈՎ

Հովանաւորութեամբ՝
ԱՁԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ
Lebanese Armenian Technical College
L.A.T.C.ի (Ալգալիս Քոլէճ) տնօրէնութիւնը

Կ'ընծայէ B.T.ի աշակերտներուն

ԱՆՎՃԱՐ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ԾՐԱԳԻՐԷՆ ՕԳՏՈՒԵԼՈՒ ԱՌԻԹԸ

Մանրամասնութեանց համար դիմել՝ Ազգ. L.A.T.C.ի տնօրէնութեան, ամեն օր, ժամը 5-ն 9:

Հասցէ՝ Ալգալիս Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճի շէնք, հեռաձայն՝ 01/244576:

«ԱՂԹԱՄԱՐ»

ՏՆԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՄԸ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Չեր ձեռնարկի պաշարին համար պահանջեցէ՛ք ԼՕՍԻ «Աղթամար» պահածոները, պատրաստուած առանց քիմիական նիւթերու եւ արեւու բնական քերտութեամբ, ծիրանի, թուզի, վայրի կեռասի, ճարճի, դոնդի եւ սերկելիկի անուշներ, կարմիր պղպեղի փոշի եւ խիւս, ամանուխի փոշի, թրուազներ, լուլիկի պահածոներ, եւ այլն:

Փնտրեցէ՛ք բոլոր supermarketներուն մէջ, համեմատաբար ցած գներով, ինչպէս նաեւ Սոսիսաւր Աուսիլա Կոօօփ մէջ, Անթիպիսի եւ միւս մասնաձեւողներ, եւ ԼՕՍԻ Արաբսի Պուլուրձեան ընկերութեան կեդրոն 4րդ յարկ:

Այս վաճառքը գոյացած գումարները կը ծառայեն ԼՕՍԻ կրթական - ընկերային եւ առողջապահական նպատակներուն:

ԼՕՍԻ ԵՐԱՍՆԱՅԻՆ ՎԱՐՅՈՒԹԻՒՆ



ԸՆԿԵՐԱՅԻՆ հոգեր

Լիբանանեան կեանքի երևույթներ

ՆՊԱՏԱԿԱՍ ՏԿԱՐՈՒԹԻՒՆ ԶԻ ԸՄՆՉՆԱՐ

Ժամանակի թափումին հետ կեանքը աւելի դժուար կը թուի ըլլալ եւ գոյատեւման պայքարը՝ աւելի խիստ: Հակառակ աշխարհի մէջ տիրող զարգացումներուն, բարգաւաճման արագ ընթացքին մարդուն դիմաց բացուող նոր հորիզոններուն եւ անոր «հրամցուած» դիւրութիւններուն, տակաւին մարդոց առօրեան կը մնայ դժուար եւ խոչընդոտող լեցուն: Թերեւս այդ արդիականացումը ինքնին դուռ կը բանայ «արդիական» դժուարութիւններու եւ սրբնթաց գարգացումը իրեն հետ կը բերէ սրբնթաց խոչընդոտներ:

Համայնարաններու արձանագրութիւններն ու մուտքի քննութիւնները սկսած են արդէն, եւ երկրորդականը աւարտած աշակերտներ «չուտարած» կը փորձեն գտնել իրենց ուղին: Այս հանգրուանը կը նկատուի կեանքի մտնելու ճակատագրական հանգրուաններէն մէկը, որովհետեւ անիկա նոր դուռ մը պիտի բանայ դէպի ապագայ: դուռ մը, որ կ'առաջնորդէ դէպի երկա՛ր ճամբայ եւ իւրաքանչիւր քայլափոխ ինքնին տարբեր դժուարութիւններու շրջանցում կ'ենթադրէ:

Այս ճամբան խորքին մէջ լեցուն է թէ՛ բարոյական եւ թէ՛ նիւթական դժուարութիւններով: Նիւթականին պատճառով շատ շատեր կը հրաժարին իրենց ուսանելու որոշումէն եւ կը փորձեն գործ մը գտնել ընտանիք պահելու եւ կամ ընտանիք կազմելու համար:

Այս պարագան շատ աւելի շեշտուած էր տանեակ տարիներ առաջ, երբ համայնարանի ծախսերը հոգալու կարողութիւն չունեցողը կը նահանջէր, մէկ կողմ կը դնէր իր երազները ու իր կեանքի նաւակը կը փորձէր այլ ուղղութեամբ առաջնորդել:

Այս իմաստով յաճախ աւելի բարտաւոր եղած են նիւթապէս բարեկեցիկ ընտանիքներու մէջ ծնած ու հասակ նետած անհատները, որոնց համար «հացի» պայքարը այդքան ալ մեծ նշանակութիւն չունի ընդհանրապէս: Հետաքրքրական է սակայն, որ հակառակ այս իրողութեան, բարեկեցիկ դասակարգի պատկանողներ երբեմն չեն ուզեր ուսանիլ ու զարգանալ եւ կը նախընտրեն արհեստը կամ պարզապէս՝ իրենց կեանքը վայելելու:

Նախապէս աշխատանքը սահմանուած էր միայն տղամարդոց՝ տան հօր, սակայն ներկայիս այդ մտածելակերպը ամբողջովին փոխուած է, եւ ընտանիքի բոլոր անդամները լծուած են աշխատանքին:

Իւրաքանչիւր կ'աշխատի իր ծիրին մէջ, կամ աւելի ճիշդ ըսելու համար, իւրաքանչիւրը կ'աշխատի իր, ուր գործ կը գտնէ:

Ժամանակը անցած է, եւ անոր հետ փոխուած են նաեւ պարագաներն ու իրողութիւնները:

Այսօր երիտասարդութիւնը աւելի վճռական է եւ իր երազներու իրականացման զանազան ձեւեր կը փնտռէ ու կը պայքարի զայն գտնելու համար:

Համայնարանականներ իրենց ուսման համար լծուած են աշխատանքի եւ անոնք կը ստանան այն աշխատանքը, որ կը յարմարի իրենց ժամանակին եւ պայմաններուն:

Արական թէ՛ իգական սեռի պատկանող անհատներ կը գտնուին աշխատանքային զանազան ասպարէզներու մէջ եւ անոնք կը տանին աշխուժ գործունէութիւն գրեթէ բոլոր բնագաւառներուն մէջ:



Անոնք կը հանդիպին յատկապէս մեծ վաճառատուներուն, առեւտրական հաստատութիւններուն, ինչպէս նաեւ ճաշարաններուն մէջ: Կան նաեւ «անձնական» գործեր, ինչպէս՝ դաս տուողներ, տունէ տուն պտտելով արտադրութիւններու ծանուցումներ կատարողներ եւ այլն: Վերջերս աւելի տարածուած երեւոյթ սկսաւ դառնալ գիշերները աշխատելու ընտրանքը, որովհետեւ ցերեկային դասերուն պատճառով համայնարանականները անհրաժեշտ ժամանակը չունին ցերեկային գործ մը աշխատելու:

Գիշերային կեանքը երիտասարդներուն համար հաճոյք եւ արկածախնդրութիւն ըլլալու կողքին, նաեւ եղած է ասպարէզ եւ անոնք պնակ լուրջով, ճաշ սպասարկելով կը վաստակին իրենց համայնարանական ուսման անհրաժեշտ գումարները:

Սակայն այս երեւոյթը տակաւին որոշ զարմանք կը յառաջացնէ կարգ մը անձերու մօտ, եւ անոնք չեն համոզուիր, թէ՛ տղաք կամ աղջիկներ առանց բարդոյթի կրնան տանիլ այս աշխատանքը:

Բարեբախտաբար այս մտածելակերպը սկսած է նահանջել, եւ երիտասարդութիւնը իր վճռակամութեամբ կը վկայէ, թէ՛ նպատակներու իրագործման համար տարուած աշխատանքը երբեք ամօթ կամ վարկարեկիչ չէ:

Ճաշարաններուն մէջ սպասարկողներուն մեծ մասը համայնարանական երիտասարդներ են եւ անոնք յաւապէս կը կատարեն իրենց գործը եւ իրենց քաղաքավարութեամբ, սորված յեղուներով եւ վարուելակերպով կը գրաւեն յաճախողները եւ կը բարձրացնեն ճաշարաններուն վարկը:

Բարձրագոյն կը թուի ինչ ստանալը այսօր դարձած է երիտասարդութեան առաջնահերթ նպատակներէն մէկը, եւ անոնք ոչինչ կը խնայեն զայն իրականացած տեսնելու համար:

Այս սինկլը Պատրաստեց ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ



ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐ ԿԸ ՊԱՏՄԵՆ...

- Կ'ուզէի ամէն գնով համալսարան յաճախել եւ բարձրագոյն կրթութիւն ստանալ: Լաւապէս կը գիտակցէի, թէ հայրս չէր կրնար օժանդակել ինձի, որովհետեւ ան հազիւ կրցած էր զիս երկրորդական վարժարան ուղարկել: Որոշեցի նախ աշխատել, որոշ գումար մը հաւաքել, ապա՝ համալսարան դիմել:

Գործի փնտռուքը իսկական մղձաւանջ մըն էր. ամէն անգամ որ ժխտական պատասխան ստանայի, կարծես բան մը կը խախտուի մէջս, սակայն տակաւին մեծ յոյսեր ունեի եւ հաստատ մնացի որոշումիս վրայ:

Երկար փնտռուքէ ետք գրասենյակի մը մէջ գործ մը գտայ եւ թեւ նախտեսածէ շատ աւելի նուազ բոշակ կը ստանայի, սակայն ուզեցի անպայման սկսիլ: Սկզբնական շրջանին տրամադրութիւնս բարձր էր եւ քիչ մը երազային ձեւով կը մօտենայի հարցերուն: Որոշ շրջան մը ետք նկատեցի, թէ այս աշխատանքով պիտի չկարենամ համալսարան հասնիլ եւ այդ պատճառով որոշեցի երկրորդ գործ մը աշխատիլ:

Ազատ ժամեր ունեի գիշերները եւ այդ ժամերը պէտք է անպայման օգտագործէի: Դիմումներ կատարեցի ճաշարաններուն եւ պանդոկներուն: Բաւական երկար ժամանակ ետք ճաշարանէ մը համաձայնութիւն ստացայ աշխատելու: Առաջին անգամ էր, որ մեզ գործ մը կը կատարէի եւ իսկապէս քիչ մը տարօրինակ էր ինձի համար: Վախի գգացում մը ունեի սկզբնական շրջանին, սակայն ինձի հետ աշխատողներուն ընկերական եւ բարեացակամ վարուելակերպը կորով եւ ուժ կը ներշնչէր, եւ ժամանակի ընթացքին դարձայ աւելի ինքնավստահ:

Գիշերային աշխատանքէս կը գտնուէի ցերեկային ինչ կրկին եւ այդ պատճառով տարի մը ետք ձգեցի գրասենյակային գործս եւ արձանագրուեցայ համալսարան: Կը խոստովանիմ, թէ շատ կը յոգնիմ եւ դասերս որոշ կաղացում կ'արձանագրեմ, սակայն յաւելեալ ջանքով եւ նիւզով անպայման կը հասնիմ նպատակիս:

Ճաշարանին մէջ յաճախողներու սպասարկութեան ընթացքին նաեւ սորվեցայ այն, որ իմ առօրեային մէջ երբեք պիտի չկարենայի սորվիլ եւ այս փորձառութիւնս ինձի յաւելեալ ուժ տուաւ կեանքի պայքարը աւելի վճռակամօրէն մղելու:

Ճաշարանի մէջ աշխատելու որոշում տուի դասերուս պատճառով, որովհետեւ անոնք կը լեցունեայ մարդոց օրս: Քիչ մը ինքնամփոփ ըլլալուս պատճառով երբեմն մարդիկ կը նեղանան ինձմէ եւ կ'ըսեն, թէ բնաւ չե՞ս ժպտիլ եւ չոր դէմք մը ունիմ: Խորին մէջ ապրած փորձառութիւններս



փորձեն անտեղի մատնանշումներ կատարել, ակնարկութիւններ ընել եւ փորձեն մեզ նեղ կացութեան մատնել: Աշխատանքին մէջ յաճախող միշտ իրականութիւնը ունի. այդպէս սորվեցուցած եմ մեզի, եւ այդ պատճառով կը փորձեմ միշտ քաղաքավար ըլլալ եւ չհակազդել անոնց արտայայտութիւններուն, սակայն երբեմն իսկապէս շատ կը նեղանամ եւ կը պատահի, որ երկարատեւ ընկերւած մնամ, այսուհանդերձ կը շարունակեմ, որպէսզի կարենամ մարդոցս ինչ որ մտաւ յարմարը գործ մը գտնել:

- Երկու տարի է վեր կ'աշխատիմ իբրեւ սպասակ. սկզբնական շրջանին թեւ կարգ մը սխալներ գործեցի եւ քիչ մը պրկուած կը գրայի, սակայն հիմա շատ աւելի փորձառու եղած եմ:

Այս աշխատանքին առաջին օրը սխալմամբ պատահաբար մը ձգեցի մէկուն գլխուն եւ իսկապէս սարսփեցայ ու աչքերս փակեցի վախմտով, որ կիներ կրնայ վնասուիլ, սակայն ան ազնուութեամբ, ժպտաց ու ըսաւ, թէ հարց չէ պատահածը:

Քանի մը շաբաթ ետք գաւաթ մը շուրջ «լոգոցուցի» տղայ մը, որ աւելի բարկացկոտ էր եւ քիչ մը ջղային ոտքի ելաւ եւ տգեղ խօսքեր րսաւ ինձի:

Կը կարծեմ, թէ ամէն աշխատանքի մէջ սխալներ կրնան պատահիլ, սակայն մեր պարագան տարբեր է այն իմաստով, որ մենք առարկայի հետ չենք աշխատիր եւ մեր սխալներուն պատճառով մարդիկ կրնան վնասուիլ:

Հիմա միշտ կը փորձեմ առաւելագոյն չափով ուշադիր ըլլալ եւ գործս լաւապէս կատարել:

Ուսանելու կողքին, այս գումարով նաեւ կ'օժանդակեմ ընտանիքիս եւ նոյնիսկ եթէ աւարտեմ եւ այլ գործ գտնեմ, կը կարծեմ որ այս գործը պիտի պահեմ, որովհետեւ նիւթական կացութիւնս բաւական դժուար է:

Սկզբնական շրջանին կարգ մը ընկերներ հեռացան ինձմէ երբ գիտցան, թէ այս գործը կ'աշխատիմ. խորքին մէջ անոնք թեւ քիչ մը նեղացուցին, սակայն յետոյ մոռցայ այդ մէկը, որովհետեւ այն ընկերը, որ իր ընկերոջմէ կ'ամչնայ, ընկեր չի նկատուիր: Ես վստահ եմ կատարած աշխատանքս եւ բնաւ հարց չունիմ. եթէ կ'ուզեմ տեղ հասնիլ, ապա պէտք է աշխատիմ:

ՍՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ

Առողջ Մնալու Գաղտնիքները

ԲՆԱԿԱՆ ԴԵՂԵՐԷՆ՝ ՍԽՏՈՐԸ ԵՒ ՍՈՒՆԸ

ՍՆՏՈՐԸ


Փարսկոնները սրբացման աստիճան արժէք կու տան ինչ սխտորին: Անոնք արդիւրեւ էին սխտորը ծամելու ուսուցիչ. սխտորը պէտք է կլլելով ուսուցիչ՝ յարգած ըլլալու համար գայն:

Սխտորը իր մէջ կը պարունակէ յատուկ տեսակի իւր մը, որ զանազան մանրէներու տեսակներ սպաննելու կարողութիւնը ունի: Ան նաեւ կը պարունակէ քիմիական նիւթ մը, որ առաջը կ'առնէ քոլեսթերոլին եւ արեան գերճնշումը կը նուազեցնէ: Ան մարմնին ջերմաստիճանը կը նուազեցնէ, կը զօրացնէ շիղերը եւ աղիքային հարցերը կը փարատէ: Սխտորը օգտակար է մարտդուութեան եւ երկկամներուն համար: Ան իր մէջ կը պարունակէ մեծ քանակութեամբ ֆոսֆոր եւ քալցիոն, հետեւաբար, անիկա մարմինը առողջ կը պահէ: Ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, թէ օրական մէկ պնդ սխտոր ուտելը կը նուազեցնէ մարսողութեան գործարաններու քաղցկեղի վտանգը: Սխտորը յոյնպէս կը զօրացնէ մարմնի դիմադրականութիւնը եւ կ'ուճացնէ ծերութեան հիւանդութիւնները: Ան կը նուազեցնէ քոլեսթերոլի քանակը արեան մէջ, որովհետեւ կարողութիւնը ունի հալեցնելու զայն: Սխտորը օգտակար է հագի եւ շունչի նեղութեան համար: Ան կ'օգտագործուի նաեւ զանազան հիւանդութիւններ բուժելու մէջ, ինչպէս՝ ինֆլուենզան եւ թիֆոյիտը: Սխտորը աղիքները հեռու կը պահէ երկրորդներէն: Ամէն չորս ժամը անգամ մը նարինջի շուրին հետ տասը կաթիլ սխտորի շուր տալով, երեխային հագը քարոզող վին կը կենայ: Սխտորը կարողութիւնը ունի մանրէներ սպաննելու եւ այդ պատճառով կ'օգտագործուի տիֆոքերիայի նման հիւանդութիւններ բուժելու մէջ: Սխտորը ուղղակի ազդեցութիւն ունի սրտի մկաններուն վրայ: Ան մկանները կ'աշխուժացնէ եւ առողջ կը պահուի սիրտը: Սխտորը շաքարախտի հետեւանքներէն հեռու կը պահէ շաքարախտաւորը: Ան կը կանխարդիւն շաքարախտի պատճառով պատահող միզային գործարաններուն հարցերը, յիշողութեան սկզբնականները եւ մարմնի մաշակարաններուն անզգայութիւնը: Ան նաեւ կը նուազեցնէ արեան գերճնշումը: Սխտորը նաեւ ցաւազրկուած ի յատկութիւն ունի: Եթէ սխտորը մանրէք եւ տեղադրեք մարմնին ցաւող մասին վրայ, ցաւը կամաց կամաց կը սկսի մեղմանալ: Օրական սխտոր ծամելու կը հեռացնէ նշագեղձերու բորբոքումը: Ան նաեւ կը նուազեցնէ փորհարութեան պատճառով յառաջ եկած ցաւը: Եթէ 200 կրամ շուրին մէջ խառնենք 100 կրամ սխտոր ու 200 կրամ շաքար եւ խմենք զայն, կը բուժենք աղիքային ցաւերը: Սակայն այս բուժման ձեւին պէտք չէ դիմեն անոնք, որոնք յոգեբու հիւանդութեան կը տառապին: Սխտորին հոտը հեռացնելու համար կարելի է անանուխ կամ ազատեղ ծամել: Սխտորը քաղցկեղը հեռացնող թիւ մէկ բանջարեղէնն է: Ան կը զօրացնէ մարմնին դիմադրականութիւնը, որ իր կարգին դէմ մեզի դէմ քաղցկեղի բժշկներուն, երբ անոնք տակաւին նոր կազմուելու վրայ են: Սխտորը կը սպաննէ այս նորարար կազմ բժշկները եւ կ'արգիլէ անոնց աճը: Քաղցկեղի մասնագէտներ կ'ըսեն, թէ սխտորը պէտք է ուտել առանց մանրելու, որպէսզի անոր մէջ գտնուող բոլոր սննդական արժէքները պահպանուին:

ՍՈՒՆԸ



Հին եգիպտացիները գիտէին սոխին բուժիչ յատկութիւնը: Անոր անունը գրուած է պաշտօնական արձաններու պատերուն վրայ: Սոխը իր մէջ կը պարունակէ օփիոյ տարրը, որ կ'աշխուժացնէ փանքրէասը: Անոր մէջ կայ նաեւ կլորէին տարրը, որ կը նմանի ինսուլինին, հետեւաբար կը նուազեցնէ շաքարի քանակը արեան մէջ: Սոխը օգտակար է նաեւ սրտին եւ թոքերուն: Անոր մէջ կը գտնուին ոսկորը զօրացնող աղի տեսակներ: Ան մարմնին էնզիմները աշխուժացնող տարրեր կը պարունակէ: Սոխը իր մէջ կը պարունակէ Ա, Պ Ե Ե Ս Ն կենսաէներգիք, երկաթ, քալցիում եւ ֆոսֆոր, ինչպէս նաեւ



իւղի տեսակներ: Ան բուժիչ զեղ է շնչարգելութենէ տառապողներուն համար: Սոխը կը զօրացնէ մարսողութեան գործարանները եւ կը մեղմացնէ մարմնի պրկուածութիւնն ու ջղային վիճակը: Ան նաեւ կը զօրացնէ մարմնին դիմադրականութիւնը: Ան կարողութիւնը ունի թիֆոյիտի եւ տիֆոքերիայի նման հիւանդութիւններու մանրէներ սպաննելու: Խորոված սոխ օգտակար է սրտի մկաններուն համար:



Կնոջական

USNOFENES ՄԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ՃԻՇԴ ԵՒ ՍԽԱԼ ԿԱՐԾԻՔՆԵՐ ԹԷՅԻՆ ՄԱՍԻՆ



1

● Թէյը կ'օգնէ նիհարնալու:
Ճիշդ-պայմանաւ որ զայն խմենք առանց շաքարի: Արդարեւ, թէյը, շնորհիւ իր բազմազանութեան, կ'օգնէ թունաւոր նիւթերու մարմնէն արտաքսման: Անիկա օգտակար միզեցուցիչ մըն է, միեւնոյն ժամանակ բարեբար դեր կը խաղայ մեր մարսողութեան գործընթացին մէջ:

Անշուշտ թէյ խմելով կարելի չէ նիհարնալ, եթէ միեւնոյն ժամանակ լուրջ սննդականոնի մը չհետեւինք:

2

● Թէյը կը պայքարի ծերութեան դէմ:
Ճիշդ-Յրանսայի մէջ կատարուած ուսումնասիրութիւն մը հաստատած է, թէ կանաչ թէյը հետեւողական ձեւով սպառելու պարագային, անիկա կ'ուշացնէ մորթին կնճիռները, որոնք առաւելաբար ի յայտ կու գան արեւին ճառագայթներուն, կենսոլորտի ապականումին եւ սթրէսին պատճառով:

Միւս կողմէ, թէյին պարունակած ֆլաւոնոյի նիւթը քառապատիկ զօրաւոր է, քան ԱՎ. կենսանիւթը մորթը կանխահաս ծերութենէ պաշտպանելու իմաստով:

3

● Թէյը կը պաշտպանէ քաղցկեղի որոշ տեսակներէ:
Ճիշդ է ՍԽԱԼ. արդարեւ, կանաչ թէյը, շնորհիւ իր բազմազանութեան, կրնայ կասեցնել միզամանի եւ ստամոքսի քաղցկեղներուն յառաջխաղացքը:

Իսկ սեւ թէյը կ'արգիլէ մորթի եւ թոքերու քաղցկեղին տարածումը այլ գործարաններու վրայ:

Այսուհանդերձ, այս իմաստով բժշկական ուսումնասիրութիւնները տակաւին իրենց սկզբնական փուլին մէջ են եւ կարելի չէ այս բոլորը իրբեւ վերջնական հաստատումներ ընդունիլ:

4

● Թէյը թելադրելի չէ ռտքի հարց ունեցողներուն:
ՍԽԱԼ. ունէ անձ կրնայ թէյ խմել, պայմանաւ որ չփազանցուի չեթիւնով: Իսկ թէյին պարունակած փոփոխութիւնը նիւթը արեան մէջի քլոսթրոբակտիան համեմատութիւնը պակսեցնելու յատկութիւնը ունի:

5

● Թէյը օգտակար է ակուներուն:
Ճիշդ է ՍԽԱԼ. թէյը ֆիւտուր կը պարունակէ, իսկ ֆիւտուրը կը գործնէ ակուները եւ զանոնք կը պաշտպանէ փտախտէ: Բայց չափազանցելու պարագային, նոյն այդ ֆիւտուրը հակառակ ազդեցութիւն կը գործէ ակուներուն վրայ եւ զանոնք մոխրագոյն կը դարձնէ:

6

● Թէյին վնասները նուազ են, քան սուրճինները:
ՍԽԱԼ. թէյը նոյնքան անպատեհութիւն ունի, որքան սուրճը, եթէ չչափաւորենք անոր սպառումը: Թելադրելի է երեկոյեան հրաժարիլ անկէ, եթէ անքնութեան հարց ունինք կամ ջղազգիւր վիճակի մատուցած ենք:

7

● Թէյը կ'արգիլէ մարմնին կողմէ մետաղներու ներծծումը:
Ճիշդ է. եթէ օրական 6 զաւաթէն աւելի թէյ խմենք, մեր մարմինը դժուարութիւն կ'ունենայ երկաթ եւ կիր ներծծելու: Հետեւաբար կը թելադրուի թէյ խմել ճաշի ժամերէն դուրս, որպէսզի այս անպատեհութիւնը չստեղծուի:

ՃԱՆՉՆԱՆՔ ՏՂԱՄԱՐԴԻԿԸ

Յաճախ կը կրկնենք, որ մարդիկը իրենց արտաքինին պէտք չէ դատել: Բայց եւ այնպէս, կամայ թէ ակամայ, անձանքի մը հագուածքը, սանտրուածքը կամ շարժումները կը տպաւորեն մեզ եւ անմիջապէս կարծիք կը կազմենք անոր մասին:

Հոգեբաններու կարծիքով, տղամարդոց սանտրուածքը, մազերուն երկարութիւնը, մորուքին կամ պեխերուն ձեւը որոշ չափով կ'արտացոլեն նկարագրային գիծեր, խառնուածք եւ այլն...

Եկէք ճանչնանք մէկ քանին.

ԿԱՐՁ ՄԱՉԸ

Կարձ մազով տղամարդիկը կ'ըլլան իրապաշտ,



անկեղծ եւ առնական. անոնք նաեւ մեծ սէր կ'ունենան բոլոր մարգածեցութիւններուն նկատմամբ:

Խուզուած մազերով տղամարդիկ մասամբ

իրենց կամքը պարտադրող անձեր կ'ըլլան: Անոնք խստապահանջ կ'ըլլան թէ իրենց անձին եւ թէ ուրիշներուն նկատմամբ:

Անոնք նաեւ կ'ուզեն ձգել «կարծր» մարդու տպաւորութիւն:

ԵՐԿԱՐ ՄԱՉԸ

Երկար մազով տղամարդիկը տակաւին իրենց պատանութիւնը ապրող,



վիպապաշտ անձեր են: Անոնք շատ զգացական կ'ըլլան, խառնուածքով՝ մեղմ եւ կը ջանան հմայել իրենց շրջապատը:

Երկար մազերով տղամարդիկ զօրաւոր անհատականութեան տէր, բայց երակոտ անձեր են. անոնք կը մերժեն սահմանափակուիլ ընկերութեան կողմէ ճշդուած չափանիշներով կամ ենթարկուիլ անոր ճշդած օրէնքներուն:

ՄՕՐՈՒՔԸ

Մօրուքաւոր տղամարդիկը կ'ուզեն ձգել առնական եւ իմաստուն մարդու տպաւորութիւն: Անոնք



կրնան ըլլալ նաեւ մեծ ամչկոտներ կամ տառապիլ ինքնավստահութեան պակասէ:

«Երեք օրուան մօրուք»ով տղամարդիկը կ'ուզեն շրջապատին վրայ այն տպաւորութիւնը ձգել, որ հոգ չեն տանիր իրենց արտաքին տեսքին, մինչդեռ իրենք ասոր հակառակ են եւ շատ զրադած են ուրիշները հմայելով:

Վերջապէս, մօրուքաւոր անձերը կ'ըլլան արեւստասէր, ազնիւ, եւ իհարկին՝ ըմբոստ:

ՊԵՆԸ

Պեխաւոր տղամարդիկը հեղինակաւոր անձեր կ'ըլլան: Անոնք յարգանք կ'ունենան ընկերութեան ճշդած օրէնքներուն նկատմամբ եւ մեծ կարեւորութիւն կու տան բարեբարութեան:



րոյական արժէքներուն: Յատուկ խնամքի կարօտող բարակ պեխ տէր այրերը կ'ըլլան ստեղծագործ, կարեւորութիւն կու տան իրենց արտաքինին, կ'ըլլան կնամեծար եւ կենցաղագէտ:

ԿՈՒՉՈՒԻ

● Կարպետ ոսկերիչ մը (սետեթր). հեռ. 01-338821:

ԾԱԽՈՒ ԸՈՂԱՇԵՐՏ

● Այնձար, գիւղիմ մը, 4000 քառ. մետր տարածութեամբ, քրիտոլ, կոյուղիով եւ թրիֆագէ ելեկտրականութեամբ: Դիմել՝ հեռ. 03 - 207772:

ԾԱԽՈՒ ԾԵՆՔ

● Երկայրկանի շէնք մը, իւրաքանչիւր յարկաբաժին երկու մնջատեցակ, հիւրասրահ, եւ յարկից մասեր: Մար Եուսէֆ Ելեկտրոնյ մօտ: Հեռ. 01/251261, 03/538530 եւ 03/574781:

ԿՈՒՉՈՒԻ

● Շատատուրիւն մը կարիքը ունի քարտուղարուհի մը: Դիմել հեռ. 03 - 882792:

ԿՈՒՉՈՒԻՆ

● Այր մարդու շապիկ կարող փորձառու գործաւորուհի մը: Դիմել՝ հեռ. 01-259196:

ՆՈՐԱԶԵՒՈՒԹԻՒՆ 2003-2004 ԱՇՈՒՆ-ՉՄԵՈՒ ՆՈՐԱԶԵՒՈՒԹԻՒՆԸ

Աշխարհի մեծագոյն ձեւագէտները արդէն իսկ արձակած են իրենց վճիռները յառաջիկայ աշուն-ձմեռ նորածեւութեան կապակցութեամբ: Ուրեմն եկէք՝ ծանօթանանք անոր գլխաւոր յատկանիշներուն:

Կարձ փէշերը (միլի միլի) վերադարձած են: Անոնք առաւելաբար փլիսէ են, կան նաեւ պարզ, նեղ կամ «փորթֆոյ» տեսակները:

Յիւզօ տաքատները յառաջիկայ եղանակի թիւ մէկ նորոյթն են: Նոյնպէս ալ «օփաք» քոլացները: Այս երկուքը կարելի է կրել կարձ փէշերու եւ կամ շատ մեծ փիւլովըներու հետ:


Վերադարձած են նաեւ շատ լայն, մեծ շապիկներն ու փիւլերը, որոնք պիտի հագցուին մարմնին փակած տաքատներու կամ հաստ քոլացներու վրայէն:

Մոյկերը, բայց առաւելաբար երկար, եւ մինչեւ իսկ ծունկէն վեր տեսակները շատ նորոյթն են յառաջիկայ եղանակին: Անոնք շատ լաւ կը յարմարին կարձ փէշերուն:

Արուեստական մուշտակն ու կաշին ջերմութիւն եւ վայելչութիւն պիտի տան վերարկուներուն եւ պլուզոններուն:

Աքսեսուարներու իմաստով, երոսէ կամ փիէ տը ֆոք գլխարկները, բուրդէ վզկապները, կաշի ձեռնոցներն ու մուշտակէ մոյկերը կարեւոր դեր պիտի խաղան յառաջիկայ եղանակի նորածեւութեան մէջ:

Ստորեւ կու տանք քանի մը նմուշ...



Պատրաստեց՝ ՇՈՒԻԿ ՄԱԻՍԱՍՈՒՆԵԱՆ

«ԱԶԳԱԿ»-Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հետաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

**ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՔՈԼԷՃԻ
80ԱՄԵԱԿԻ
ԿՐԹԱՆՊԱՍՏԻ ՖՈՆՏ**

Հայ Աւետարանական Ա. Եկեղեցի՝ Հայ Աւետարանական Քոլեճի առաքելութեան եւ ծառայութեան հանդէպ ունեցած յանձնառութեան եւ աջակցութեան իբրեւ գործնական արտայայտութիւն, ուրիշութիւնը ունի յայտարարելու, թէ հիմնած է Հայ Աւետարանական Քոլեճի 80ամեակի Կրթանախարհի ֆոնտը, որուն կրնան դիմել բոլոր այն հայ աշակերտները, որոնք ցուրտ կամ անապահով հետապնդողներն են կամ կը հետապնդեն Հայ Դպրոցը, զանոնք տուն Հայ Դպրոց վերադարձնելու համար: Փափաքողները կը խնդրուի դիմել Հայ Աւետարանական Ա. Եկեղեցիի գրասենակ՝ դիմումնագիրը եւ բոլոր մանրամասնութիւնները ստանալու համար:

Բաղադրութիւն՝ 4 անձի համար.



- ◆ 250 կրամ դեղին խաղող
- ◆ 250 կրամ կարմիր խաղող
- ◆ 4 կէս սուրճի դգալ փոշի կասիա
- ◆ 2 ապուրի դգալ քիմիական թթիւ
- ◆ Պտղունց մը վանիլ
- ◆ 10 սանթիլիթր թարմ սեր (քրէմ ֆրէշ)
- ◆ 3 հաւկիթ
- ◆ 200 կրամ ալիւր
- ◆ 200 կրամ շաքար
- ◆ 95 կրամ կարագ
- ◆ Ապուրի դգալ մը ռոմ խմիչք

Պատրաստութիւն.

Խաղողները լուալ, կուտերը մաքրել, խորունկ ամառնի մը մէջ զննել եւ անոնք վրայ ռոմը ցանել: Աւելցնել 50 կրամ շաքար եւ մէկ կողմ ձգել: 80 կրամ շաքար հալեցնել:

Ամանի մը մէջ զարնել հաւկիթները, աւելցնել մնացեալ շաքարը, վանիլը: Երբ միտաբար, փրփրոտ նիւթ մը ստացուի, աւելցնել կարագը, թարմ սերը, ալիւրը, թթիւները եւ կասիան, խառնել փայտէ դգալով մը, աւելցնել խաղողներուն կէսը եւ խառնուրդը պարպել նախապէս կարագով ձեփուած կաղապարին մէջ: Մնացեալ խաղողները խմորին երեսը շարել քիչ մը ճնշելով: Կաղապարը փուռ փոխարկել եւ 180 քերմաստիճանով եփել շուրջ 35 վայրկեան: Փուռէն հանելէ ետք սպասել, որ պաղի, ապա՝ շերտել եւ հրամցնել:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն ԱՇԽԱՐՀ



ՃԱՏՐԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Հայաստանի ճատրակի տղոց ախոյանությունները 2րդ հանգրվանի մրցումներում, կարգին Ասրեան եւ Գարեհիլ Սարգսեան մրցաշարի իրենց երկրորդ յաղթանակը արձանագրելով, այժմ երկուբան կհասնեն ընդհանուր դասակարգման պարագլուխի դիրքը:

Ստորեւ՝ 2րդ հանգրվանի մրցումներում արդիւնքները:

| | |
|--|-----|
| Արման Փաշիկեան - Կարեն Ասրեան | 0-1 |
| Լիլիթ Մկրտչեան - Տիգրան Պետրոսեան | 0-1 |
| Արսեն Եղիազարեան - Արտաշէս Մինասեան | 1-0 |
| Բենիամին Գալստեան - Գեորգ Յարութիւնեան | 1-0 |
| Աշոտ Անաստասեան - Գարրիկ Սարգսեան | 0-1 |

● **ԵՐԷԿ**, Թեհրանի Արարատ մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ իրանի 36րդ համահայկական խաղերուն պաշտօնական բացումը, որ նուիրուած է Թեհրանի հայ մարզաշախմատի Սարգարապատ միութեան հիմնադրութեան 20ամեակին:

Խաղերու պաշտօնական բացումէն առաջ Թեհրանի Սարգարապատ քաղաքամասի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մէջ օրհնուեցաւ 36րդ համահայկական խաղերու շահը, որ 11 մարզիկներու կողմէ բերուեցաւ Արարատ մարզադաշտ:

Այդ խաղերուն իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Թեհրանահայ միութիւններու 676 մարզիկներ, ինչպէս նաեւ Հայաստանէն հինգ ճատրակ խաղադուներ:

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՊՐԻՒՔՍԷԼԷՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ



Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ նախարարութեան իր կեդրոնատեղիին մէջ ընդունեց Պրիւքսէլի խորհրդարանական պատուիրակութիւնը, որուն կ'ընկերակցէր Լիբանանի մէջ Պեյքիբայի դեսպան Ֆրանսուազ Կիւսթան:

ՌՈՒՄԸՆԻԿԷ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ ՖԻՖԱՆ

Պայէրն Միւնխի նախագահ՝ Քարլոյնց Ռուբինիկէ, շաբաթակից զբոսանքի ընթացքին «Պիլս» օրաթերթին հետ իր կատարած հարցազրոյցին ընթացքին, խստօրէն քննադատեց ՖիֆԱՆ եւ անոր նախագահը՝ Սէփ Պիլթըրը, սպառնալով նոյնիսկ իր ակումբին մասկազմող մարզիկները ազգային խումբին չտրամադրել, եթէ անոնք միջազգային իրենց պարտականութենէն վերաւոր վերադառնան:

Ան բողոքեց ըսելով, որ միջազգային մրցումները պէտք է, որ տեղի ունենան Եւրոպայի օրերը, որպէսզի եթէ պատահի, որ մարզիկներ վերաւորուին, որոշ ժամանակ մը ունենան ապաքինելու:

Ան կ'ակնարկէր այնցեալ շաբաթավերջին Պայէրն Միւնխի կրած պարտութեան, նկատի ունենալով որ Վոլֆսպուլերի դէմ տեղի ունեցած մրցումին (3-2), խումբին հիմնական մարզիկները, որոնց կարգին՝ Միքայէլ Պայաք, Սեպուսթիան Տէզլըր, Ենս Ժեյմսի եւ Քլաուսի փոխարինումը վերադարձած էին:

«ՉԵՍՓԻՆՉ ԼԻԿ»

ԱՐՍԵՆԱԼ ԻՐ ԴԱՇՏԻՆ ԿՐԱՅ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ ԻՆԹԵՐ ՄԻԼԱՆԵՆ՝ 3-0

«Չէսփինչ Լիկ»ի Ա. հանգրվանի մրցումներուն, երէկ գիշեր տեղի ունեցան ութ ճակատամներ Ա. Բ. Գ. եւ Դ. խմբակներէն ներս:

Պէտք է ըսել, որ երէկեան եօթ յաղթանակներէն կարեւորագոյնը արձանագրեց ինթեր Միլան, որ 3-0 արդիւնքով յաղթական վերադարձաւ Արսենալի «Հայալըրի» դաշտէն: Մրցումին երեք կոլերն ալ նշանակուեցան Ա. կիսախաղին, յաջորդաբար՝ Ժուլիո Քրուզի (22րդ), Էնտի Վան Տէր Մէյտէի (24րդ) եւ Օպաֆեմի Մարթինսի (41րդ) կողմէ: Նախքան ինթերի երրորդ կոլը նշանակելը, իտալական կազմին բերդապահ Ֆրանչեսքո Թոլտո զսպեց Թիեռի Հանրիի հարուածած փենալթին:

«Տէլ Ալի» դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին, Եուվենթուս 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Կալաթասարայը, շնորհիւ՝ Ալեքսանտրո Տէլֆիուսի (5րդ) եւ Ջիլիո Ֆերարայի (73րդ) նշանակած կոլերուն: Թրքական կազմին կոլը նշանակեց Հաքան Շիւքիւր (19րդ):

Ինթերի նման օտար դաշտի վրայ երկրորդ յաղթանակ արձանագրող խումբը հանդիսացաւ Մոնաքո, որ 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Փ. Ս. Վ. Այնտոնովը: Իշխանապետական կազմին կողմէ նշանակեցին Ֆեռնանտո Մորիենթէս (31րդ) եւ Էտուար Սիսէ (56րդ), իսկ Այնտոնովը կոլը՝ Ուիլֆրէտ Պոմա (65րդ):

Հոլանտացի յառաջապահ Ռոյ Մաքայի կողմէ նշանակուած երկու կոլերը (73րդ եւ 86րդ) բաւարար եղան, որ անոր կազմը՝ Պայէրն Միւնխի 2-1 արդիւնքով պարտութեան մատնէ Սելթիքը, հակառակ անոր որ այս վերջինը ինք բացաւ մրցումին հաշիւը, շնորհիւ՝ էլըն Թոմսընի նշանակած կոլին (57րդ):

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները:

| |
|--|
| Ա. ԽՄԲԱԿ Լիոն (Ֆրանսա) - Անտրլիքթ (Պեյքիբ) 1-0 Պայէրն Միւնխի (Գերմանիա) - Սելթիք (Սկոտլանդ) 2-1 |
| Բ. ԽՄԲԱԿ Տիմաօ Քիւլի (Ուրուգուայ) - Լոնոնթիո Մոսկուա (Ռուսիա) 2-0 Արսենալ (Անգլիա) - Ինթեր Միլան (Իտալիա) 0-3 |
| Գ. ԽՄԲԱԿ Ա.Է.Ք. Ա.Ք.Է.Ք. (Յունաստան) - Տեփոթիլո Քորուլա (Սպանիա) 1-1 Փ. Ս. Վ. Այնտոնովը (Հոլանտա) - Մոնաքո (Ֆրանսա) 1-2 |
| Դ. ԽՄԲԱԿ Եուվենթուս (Իտալիա) - Կալաթասարայ (Թուրքիա) 2-1 Ռեալ Մադրիտ (Սպանիա) - Օլիմպիկոս (Յունաստան) 1-0 |

ԵՆՒ. Է. ԷՏ. Ա.

ԵՒՐՕ 2004Ի ԶՏՈՒՄԻ ՄՐՑԱՇԱՐՔԻ ՓԼԷՅՅՈՅԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ

Իր գումարած փողովին, երէկ Եու. Է. ԷՏ. Ա. ն հրապարակեց այն 23 խումբերուն անունները, որոնք Եւրո-2004ի ֆուտբոլի գտումի մրցաշարին վերջին մրցումներէն ետք, կրնան փլէյօֆի մրցումներուն իրենց մասնակցութիւնը բերել:

Ցառաջիկայ Հոկտեմբեր

11էն ետք տեղի ունենալիք մրցումներէն ետք պիտի յստականան այն տասը խումբերուն անունները, որոնք պիտի մասնակցին փլէյօֆի մրցումներուն: Երթի մրցումները տեղի պիտի ունենան

յառաջիկայ յոյսեմբեր 15ին եւ 16ին, իսկ դարձի մրցումները՝ նոյեմբեր 18ին եւ 19ին:

Պայէրն Միւնխի

Այս, այդ տասը խումբերէն միայն հինգը պիտի ապահովեն Փորթուգալի իրենց տոմսը, միանալով իւրաքանչիւր խմբակի պարագլուխի դիրքը գրաւողներուն: 16րդ խումբը պիտի ըլլայ մրցաշարը հիւրընկալող երկրը Փորթուգալ:

Նշեք, թէ փլէյօֆի այդ

մրցումները տեղի պիտի ունենան փլէյօֆի մրցումներէն ետք փլէյօֆի նկատի ունենալով անոնց գրաւած

դիրքերը՝ ՖիֆԱի ընդհանուր դասակարգման մէջ:

Ստորեւ՝ փլէյօֆի

մրցումներուն մասնակցելու յոյս ունեցող խումբերը:

Ա. ԽՄԲԱԿ. - Սլովենիա
Բ. ԽՄԲԱԿ. - Ռուսիա
Գ. ԽՄԲԱԿ. - Լոնոնթի
Դ. ԽՄԲԱԿ. - Լաթուիա
Ե. ԽՄԲԱԿ. - Անգլիա
Զ. ԽՄԲԱԿ. - Գերմանիա
Է. ԽՄԲԱԿ. - Պեյքիբ
Ը. ԽՄԲԱԿ. - Պեյքիբ
Թ. ԽՄԲԱԿ. - Իտալիա
Կամ Կալաթասարայ
Ժ. ԽՄԲԱԿ. - Ռուսիա
Ձուիցերիա կամ Այլի

ՉԵԼՍԻ՝ ՄՏԱՀՈԳ

Փարմալէն Զելսիի միացած ռումանացի մարզիկ՝ Եսթիան Միլի, թէեւ «Չէսփինչ Լիկ»ի ֆուտբոլի մրցաշարին Ա. հանգրվանի մրցումներուն, իր կազմին հետ յաղթանակ արձանագրեց, սակայն Սփարթա Փրակայի մարզիկներէն Ռասթիլա Միքայիլի կատարած թաքըլը անոր դէմ, պատճառ դարձաւ, որ ան մրցումը չկարենայ շարունակել:

Երեք մրցումի ընթացքին չորս կոլ նշանակած եւ անոր փոխանցման համար 16 միլիոն փաւնտ վճարած Չելսիի պատասխանատուները կը մնան մտահոգ, թէ անոր ստացած վնասուածքը, որքա՞ն ժամանակի պիտի կարօտի ապաքինելու համար եւ թէ ան, քանի՞ մրցումի դաշտ պիտի չկարենայ ներկայանալ:

ՄԲՈԼՁ ՊԱՏՐԱՍՏ ԹՈՒՐԵՒՈՅ ԴԷՄ

Ա ն գ լ ի ղ յ ֆուտբոլի ֆետերասիոնին մէկ պատասխանատուն երէկ յայտնեց, որ Մանչեսթըր Եուլայթերի միջնապահ՝ Փոլ Սքոլը իր մասնակցութիւնը պիտի բերէ յառաջիկայ Հոկտեմբեր 11ին, Թուրքիոյ դէմ տեղի ունենալիք Եւրո-2004ի ֆուտբոլի գտումի մրցաշարին վերջին մրցումին (որ տեղի պիտի ունենայ Պոլսոյ մէջ), նկատի ունենալով որ ան վերաբուցուած թեւեւ պիտի չենթարկուի:



Փոլ Սքոլը

Այն մտավախութիւնը կար, որ ան երրորդ վերաբուցումին ենթարկուելով բացակայի այդ կարեւոր մրցումին, նկատի ունենալով որ Անգլիա հաւասարութեամբ մըն ալ պիտի բաւարարուի ապահովելու համար իր տոմսը:

Նշեք, թէ Անգլիա, որ մաս կը կազմէ Է. խմբակին, այժմ մէկ կէտով կը գերազանցէ Թուրքիան:

ՓՈՒԿ ՓՈՒԿ

ԼԻԶԱ ՊԱՐԻՔԵԱՆ ԼԱԻ ԶԵՒՈՎ ՍԿՍԱԻ ԱՍԻՈՅ ՄՐՑԱՇԱՐՔԻՆ

Քաթարի մէջ տեղի ունեցող Արեւմտեան Ասիոյ փինկ փոնկի աշխարհի գտումի մրցաշարին իր կատարած առաջին մրցումին, Լիբանանը ներկայացնող Հ. Մ. Լ. Մ. ի մարզիկ Լիբա Պարիքեան բաւական տպաւորիչ ձեւով սկսաւ մրցաշարը, երբ 4-0 արդիւնքով պարտութեան մատնեց իր մրցակիցը՝ Ղընուան (Պահլէյն): Լիբանանի թիւ 2 դասուած մարզիկը, այսօր առաւօտեան ժամը 10:00ին իր երկրորդ մրցումը պիտի կատարէ Զէյնայի դէմ (Յորդանան):

Լիբանանի թիւ 1 դասուած եւ դարձեալ Հ. Մ. Լ. Մ. ի մարզիկ Լարա Քէչէպաշեան Ա. հանգրվանի իր երկու մրցումները կը կատարէ այսօր: Առաջին մրցումին, Լարա առաւօտեան ժամը 10:00ին կը ճակատի Տալալի դէմ (Քուէյթ), իսկ երկրորդին, ժամը 5:00ին՝ Ֆարահի դէմ (Իրաք):

ՍՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՑԱՇԱՐՔ

Սպանիոյ ֆուտբոլի բաժակի մրցաշարին Ա. հանգրվանի մրցումներուն, որոնք տեղի պիտի ունենան յառաջիկայ Հոկտեմբեր 8ին, Ա. դասակարգին մաս կազմող քսան խումբերն ալ իրենց մրցումները պիտի կատարեն օտար դաշտերու վրայ, նկատի ունենալով որ անոնց մրցակիցները պիտի ըլլան Գ. եւ Դ. դասակարգին մաս կազմող խումբեր:

Տեղի ունեցած վիճակագրութենէն ետք, Ա. դասակարգին մաս կազմող 19 խումբերուն մրցակիցները պիտի ըլլան Գ. եւ Դ. դասակարգի կազմերը, բացի Էսփանիոլէն, որուն մրցակիցը պիտի ըլլայ Բ. դասակարգին մաս կազմող Էլչէ:

Ստորեւ՝ Ա. դասակարգին մաս կազմող խումբերուն կատարելիք մրցումներուն յայտագիրը (փակագիծին մէջ նշուած է խումբերուն որ դասակարգին պատկանիլը):

- Քոմպոսելա (Գ.) - Տեփոթիլո Քորուլա (Ա.)
- Պարաքսո (Գ.) - Ռասիլկ Սանթանտէր (Ա.)
- Կիմնասթիքա (Գ.) - Աթլետիքո Պիլլաո (Ա.)
- Օվիեսո (Դ.) - Ռէալ Մադրիտ (Ա.)
- Ռէալ իւնիոն (Գ.) - Օսասունա (Ա.)
- Փոնթեվետրա (Գ.) - Սելթա Վիլո (Ա.)
- Լէոնէսա (Գ.) - Ալպասթէ (Ա.)
- Միլանէս (Գ.) - Ռէալ Մարալկոնա (Ա.)
- Քոնքուենս (Գ.) - Աթլետիքո Մատրիտ (Ա.)
- Չամորա (Գ.) - Ռէալ Վալադոլիտ (Ա.)
- Սան Սեպասթիան Տը Լոս Ռեյնս (Գ.) - Ռէալ Մատրիտ (Ա.)
- Լորքա (Գ.) - Մուրսիա (Ա.)
- Կրամանէթ (Գ.) - Պարսելոնա (Ա.)
- Ալիքանթէ (Գ.) - Վիարէալ (Ա.)
- Սապատէլ (Գ.) - Մալորքա (Ա.)
- Քասթիլոն (Գ.) - Վալենսիա (Ա.)
- Էլչէ (Բ.) - Էսփանիոլ (Ա.)
- Ռեյնս Աթլետիքո (Դ.) - Սելթա (Ա.)
- Պապասոն (Գ.) - Ռէալ Պեյքի (Ա.)
- Քուէթա (Գ.) - Մալաղա (Ա.)

ՀԵՏԵԼԱՐՔԱԻ ՍՊԱՆԻՈՅ ՇՐՁԱՎԱՋԲ

ՅԱՊՈԸ ԴԱՐՁԵԱԼ ՅԱՂԹԱԿԱՆ



Էրիք Յապըլ

Օրուան մը դարձրէ ետք, երէկ շարունակուեցաւ Սպանիոյ հեծելաբանի շրջավազը (Վուէլթա), երբ տեղի ունեցաւ 11րդ հանգրվանի մրցումը՝ Իւթիլէյնի Քուէթա (162 քմ.): Անիկա վերջ գտաւ գերմանացի Էրիք Յապըլի (Թեյքեթ) յաղթանակով, որ անցեալ երկուշաբթի օր շահած էր 10րդ հանգրվանի մրցումը՝ Անտորայէն Սապատէլ (194 քմ.):

Հեծելաբանորդներու ընդհանուր դասակարգման մէջ տակաւին սպանացի Իսիտրո Նոպալ կը շարունակէ մնալ պարագլուխի դիրքին վրայ:

Այսօր տեղի կ'ունենայ 12րդ հանգրվանի մրցումը՝ Քուէթայէն Ալպասթէ (167 քմ.):

Ստորեւ՝ երէկուան արդիւնքները:

- 1.- Էրիք Յապըլ (Գերմանիա) 3 ժամ 14' 59"
- 2.- Թոմ Պուլնը (Պեյքիբ) 6ոյնը
- 3.- Անիլէ Էտո (Սպանիա) 6ոյնը
- Ընդհանուր դասակարգում
- 1.- Իսիտրո Նոպալ (Սպանիա) 37 ժամ 12' 40"
- 2.- Իկոր Կոնգալէս Տը Կալտեանո (Սպանիա) 1' 48" ուշ
- 3.- Մանուէլ Պելլոքան (Սպանիա) 3' 03" ուշ
- 4.- Տարիո Ֆրիկո (Իտալիա) 3' 05" ուշ
- 5.- Ռոպերթո Զերաս (Սպանիա) 3' 28" ուշ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ 75 ԱՍԵԱԿ
Ն. ԱՂԲԱԼԵԱՆ ՄԱՍՆԱՃԻՒՂ.
ՀԱԼԷՊ

**ԱՆԴԱՄԱԿԱՆ
ԸՆԴԴԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
Բ. ՆԻՍ**

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 19 Սեպտեմբեր երեկոյան ժամը 9:00ին, Ն. Աղբալեան սրահին մէջ:

«ՊԱՍՍ» ՕՐԱԹԵՐԹԸ ԿԸ ԳՐԷ

ՍՈՒՐԻԱ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՉԷ ԻՐԱՔԻ ՄԷՋ ԱՍԵՐԻԿԵԱՆ ԳԼԽԱՌՈՐԻԹԵԱՄԲ ԲՈՆԱԳՐԱՒՈՂ ՈՒԺԵՐՈՒՆ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԵՒՊԱՂԵՍԻՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԻՆ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ԶԱՆՈՂՈՒԹԻՆՆԵՐՈՒՆ

ԴԱՄԱՍԿՈՍ, 17 (ԱՅՓ).- Սուրիա պատասխանատու չէ Իրաքի մէջ ամերիկեան զինուորական թեմաքաղաքում ընդհանուր ուժերով իրականացրած զինուորական գործողություններին, որոնք հանգեցրել են իսրայելյան զինուորական թեմաքաղաքում ընդհանուր ուժերով իրականացրած զինուորական գործողություններին, որոնք հանգեցրել են իսրայելյան զինուորական թեմաքաղաքում ընդհանուր ուժերով իրականացրած զինուորական գործողություններին...

տուրքիան պիտի կանչուի: Եթէ փորձէ ձեռք բերել կամ վաճառել հաւաքական քանդուղի գնքերը: Սպիտակ Տանքանքերը՝ Աքոթ Մըլիլըն յայտնած է, թէ Ուաշինգթոն յստակ դարձուցած է Սուրիոյ, որ անոր վերաբերմունքը «անընդունելի է» եւ թէ պէտք է փոխել զայն: Ան ամբաստանած է Դամասկոսը՝ Համասի, իսլամական ժիհադիստի, Հըզպալլայի եւ այլ խմբակներու օժանդակելու յանցանքով: Մըլիլըն նաեւ ամերիկեան մտահոգութիւնները արտայայտած է այն գծով, թէ Դամասկոս իրաքի հետ իր սահմանները չէ փակած ծայրայեղականներու առջեւ, որոնց նպատակը ամերիկեան ուժերուն վրայ յարձակելն է:

Պոլիթըն Ներկայացուցիչներու Տան Միլիլին Արեւելքի եւ Կեդրոնական Ասիոյ հարցերու պատասխանատու ենթախմբին խումբին ըսած է, որ Սուրիա, Իրանի, Հիւսիսային Բորնէյի եւ Լիպիոյ հետ ամերիկեան ապահովութեան լուրջ վտանգ կը նկատուին: Ան յայտնած է, որ որդեգրուած դիւանագիտական միջոցառումները պարտադրելու Դամասկոսի, որ իր կապերը խզէ ծայրայեղական խմբակներու հետ եւ արգիլուած գնքերու ձեռքբերման ինդիքի իր ճիգերէն հրաժարի, ցարդ ապարդիւն եղած են:

Արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան պաշտօնատար Ճոն Պոլիթըն, որ միջազգային ապահովութեան եւ գնքերու ճակատչիտի տակ առնելու հարցերով կը զբաղի նախարարութեան մէջ, նախապէս ըսած է, որ մինչ ներկայիս չկան տեղեկութիւններ, որոնք ցոյց կու տան, թէ Սուրիոյ կառավարութիւնը հաւաքական

ԱՍԵՐԻԿԵԱՆ ԱՊԱՆՈՒԹԵԱՆ ԿՍԱՆԳ

Արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան պաշտօնատար Ճոն Պոլիթըն, որ միջազգային ապահովութեան եւ գնքերու ճակատչիտի տակ առնելու հարցերով կը զբաղի նախարարութեան մէջ, նախապէս ըսած է, որ մինչ ներկայիս չկան տեղեկութիւններ, որոնք ցոյց կու տան, թէ Սուրիոյ կառավարութիւնը հաւաքական

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԷՋ

ԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՆ ԻՍՐԱՅԷԼԸ, ՈՐ ՉԷ ԿՆՔԱԾ «ԷՆ. ՓԻ. ԹԻ.» ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐԸ

ՎԻԵՆՆԱ, 17 (ԱՅՓ).- Վիեննայի մէջ կայացած կորիզային Ուժանիւթի Միջազգային Գործակալութեան ժողովին, Արաբական Լիգայի անդամ 15 պետութիւնները առաջարկած են բանաձեւ մը՝ դատապարտելով Իսրայէլը, որ կորիզային գնքերու տարածումը արգիլող համաձայնագիրը («ԷՆ. ՓԻ. ԹԻ.») չէ կնքած, յայտնած են դիւանագետներ Չորեքշաբթի օր: Արաբ դիւանագետ մը յայտնած է, որ Միլիլին Արեւելքի մէջ, ինչպէս Իրաքի եւ Իրանի մէջ, կորիզային գնքերու ենթադրեալ ծրագիրներու վերաբերեալ բազմաթիւ զարգացումներ արձանագրուած են, շեշտելով, որ Իսրայէլը նոյնպէս պէտք է նշուի: Գործակալութիւնը, որ անցեալ շաբթուրէն ի վեր ժողովներ կը կայացնէ Վիեննայի մէջ, կոչ ուղղած է Իրանի, որ մինչեւ Հոկտեմբեր 31 փաստէ, թէ գաղտնօրէն կորիզային գնքեր չի մշակեր: Իսրայէլը, որ կ'ենթադրուի, թէ կորիզային գնքեր ունի, սակայն չէ հաստատած զայն, գործակալութեան մէջ անդամ է: Անիկա չէ ստորագրած «ԷՆ. ՓԻ. ԹԻ.»-ն, որ 1970ին ի գործ դարձած է ապահովելու համար կորիզային գնքերու տարածումը:

ՄՊԱՆԱՅԻ ԴԱՏԱԽԱԶ ՊԱԼԹԱԶԱՐ ԿԱՐՍՈՆ 35 ԱՀԱՔԵԿԻԶՆԵՐՈՒ ԴԷՄ ՉԵՐԲԱ ԿԱԼՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ՍՏՈՐԱ ԳՐԵՑ

Սպանացի հանրածանօթ դատախազ Պալթազար Կարսոն երէկ 35 ահաբեկիչներու դէմ ձեռքարկութեան միջազգային հրամանագիր ստորագրեց, ներառելով Ուսամա Պըն Լադէնի դէմ: Ինչ կը վերաբերի «Ժազիրա»-ի լրագրող Թալիբ Ալունիին, որ ձեռքարկուած է Սպանիոյ մէջ, Կարսոն համոզուած է, որ ան կապ ունի «Քալիփա»-ի հետ, հետեւաբար ան կը մնայ կայանքի տակ:

ԻՐԱՔԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԱՌՆՉՈՒԹԵԱՄԲ ԲԱՐՁՐԱՅՈՒՅԱԾ ԻՐ ԱՂՍՈՒԿԻՆ ԳՇՈՎ

«ՊԻ. ՊԻ. ՍԻ.» ԵՏԴԱՐԶ ԿԸ ԿԱՏԱՐԷ...

ԼՈՆՏՈՆ, 17 (ԱՅՓ).- Բրիտանական «ՊԻ. ՊԻ. ՍԻ.» կայանին թղթակիցը, որ առաջին անգամ յայտնած էր, թէ վարչապետ Թոնի Պլեյթի կառավարութիւնը չափազանցած է Իրաքի պատերազմին տուն տուող պատճառները, Չորեքշաբթի օր պաշտպանած է իր թէզը, սակայն ՄԱԿի գնքերու նախկին քննիչ Տէյլիթ Բլեյթի անձնասպանութեան շուրջ քննութիւն տանող ատենանի ըսած է, թէ իր թղթակցութեան մէջ սխալներ ըրած է:



Կիլիկըն

Անտրիւ Կիլիկըն, որ դատական քննութեան գլխաւորող դատաւոր Պրայըն Հաթընի կողմէ դարձեալ կանչուած է վկայութիւն տալու համար, Բլեյթի հետ տեսակցած է Լոնտոնի մէջ Մայիս 2ին ձայնասփռուած իր տեղեկագրի շարքի մը առաջ: Տեղեկագիրը կ'ըսէր, թէ Իրաքի եւ հաւաքական քանդուղի գնքերու վերաբերող Սեպտեմբեր 2002ի մէկ թղթածրարը «գեղեցկացուած է»: Անիկա ի միջի այլոց կը յայտնէր, որ Սատտամ Հիւսէյն 45 վայրկեանի մէջ կրնայ քիմիական եւ կենսաբանական գնքեր հաստատել: Կիլիկըն ատենանի Չորեքշաբթի օր ըսած է, թէ Բլեյթ իրեն յայտնած է, որ «45 վայրկեանի» վերաբերող տեղեկութեան կարելի չէ վստահել եւ թէ անիկա թղթածրարին մէջ զետեղուած է հակառակ գաղտնի սպասարկութեան շրջանակներու կարգ մը անդամներուն փափաքին: Այսուհանդերձ Կիլիկըն խոստովանած է, թէ սխալ լած է, երբ հաղորդած է, որ գաղտնի սպասարկութեան շրջանակներուն թղթածրարին մասին մտահոգութիւններ փոխանցուած են կառավարութեան: Ան նաեւ խոստովանած է, որ ուղղակի սփռումի մը ընթացքին ոչ դիտումնաւոր կերպով որոշ սխալներ ըրած է, որին հետք Բլեյթի, որ պաշտպանութեան նախարարութեան մէկ խորհրդատու է, նկարագրած է իբրեւ «գաղտնի սպասարկութեան մէկ աղբիւր»:

ՊԱՂԵՍՏԻՆՅԻՔ ԽՍՏԻԻ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՆ ՄԱԿԻ...

Շարունակուած Ա. Էջէն տե ամերիկեան վերոն եւ Ապահովութեան Խորհուրդի մէջ ծխտական արդիւնքը բանաձեւի մը, որ կ'անցնուի Միջին Արեւելքի: Արտաքին գործոց նախարարութեան բանաձեւերը ըստ, որ բանաձեւը հաւասարակշռուած պատգամ մը կ'ուղղէր իսրայելացիներուն եւ պաղեստինցիներուն: Ռ.ՈՒՍԻԱ ղիտել տուաւ, որ ձայնողութեան մատնուած բանաձեւը պէտք չէ յայտնել քննարկումի ենթարկուէր քըւլտարկութեան դրուելէ առաջ: Ռուսիա բանաձեւին ի նպաստ քուլտարկողներէն մէկն էր:

Արտաքին գործոց նախարար Անիտ Մախեր ըսաւ, որ ամերիկեան վերոն արդիւնքը բանաձեւի մը, որ կ'անցնուի Միջին Արեւելքի: Արտաքին գործոց նախարարութեան բանաձեւերը ըստ, որ բանաձեւը հաւասարակշռուած պատգամ մը կ'ուղղէր իսրայելացիներուն եւ պաղեստինցիներուն: Ռ.ՈՒՍԻԱ ղիտել տուաւ, որ ձայնողութեան մատնուած բանաձեւը պէտք չէ յայտնել քննարկումի ենթարկուէր քըւլտարկութեան դրուելէ առաջ: Ռուսիա բանաձեւին ի նպաստ քուլտարկողներէն մէկն էր:

«Արտաքին գործոց նախարար Անիտ Մախեր ըսաւ, որ ամերիկեան վերոն արդիւնքը բանաձեւի մը, որ կ'անցնուի Միջին Արեւելքի: Արտաքին գործոց նախարարութեան բանաձեւերը ըստ, որ բանաձեւը հաւասարակշռուած պատգամ մը կ'ուղղէր իսրայելացիներուն եւ պաղեստինցիներուն: Ռ.ՈՒՍԻԱ ղիտել տուաւ, որ ձայնողութեան մատնուած բանաձեւը պէտք չէ յայտնել քննարկումի ենթարկուէր քըւլտարկութեան դրուելէ առաջ: Ռուսիա բանաձեւին ի նպաստ քուլտարկողներէն մէկն էր:

ԲԱՆԱԶԵԻՆ ԶԱՆՈՂՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Ամերիկեան վերոն դատապարտուեցաւ միջազգային ու շրջանային երկիրներու եւ ղեկավարներու կողմէ: ՖՐԱՆՍԱ յայտարարեց, որ կը դատապարտուի:

Ռ.ՈՒՍԻԱ ղիտել տուաւ, որ ձայնողութեան մատնուած բանաձեւը պէտք չէ յայտնել քննարկումի ենթարկուէր քըւլտարկութեան դրուելէ առաջ: Ռուսիա բանաձեւին ի նպաստ քուլտարկողներէն մէկն էր:

«Արտաքին գործոց նախարար Անիտ Մախեր ըսաւ, որ ամերիկեան վերոն արդիւնքը բանաձեւի մը, որ կ'անցնուի Միջին Արեւելքի: Արտաքին գործոց նախարարութեան բանաձեւերը ըստ, որ բանաձեւը հաւասարակշռուած պատգամ մը կ'ուղղէր իսրայելացիներուն եւ պաղեստինցիներուն: Ռ.ՈՒՍԻԱ ղիտել տուաւ, որ ձայնողութեան մատնուած բանաձեւը պէտք չէ յայտնել քննարկումի ենթարկուէր քըւլտարկութեան դրուելէ առաջ: Ռուսիա բանաձեւին ի նպաստ քուլտարկողներէն մէկն էր:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻՔԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՇՈՒԹԻՐԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՐԱՄ ԽԱՏՉԱԾՈՒՐԵԱՆԻ ԾՆՆԻԵԱՆ 100 ԱՄԵԱԿ ARAM KHATCHADOURIAN 100th ANNIVERSARY

Under The Patronage of H.E. MR. GHAZZI AL ARIDI, Minister of Culture ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻԻՆ Հայաստանի Պարարուեստի Պետական Անսամպլ

Advertisement for the concert featuring the State Dance Troupe of Armenia, Artistic Director - Honoured Artist of Armenia NORAYR MEHRABIAN. Tickets on Sale: Virgin Box Office, Down Town, BHV Jnah, Hamazkayin Library, Discotheque Geka, Studio Vatche, Library Obelix Antelias. THURSDAY 2 OCTOBER, SATURDAY 4 OCTOBER 2003 AT 8:30 PM IN UNESCO PALACE. Includes image of Cigaronne and Arzni water.

Advertisement for NURSING ԳՕԼԻԿԼՈՒԹ ԲՈԼԷՃԻ ՆՈՐՈՒԹԻՒՆԸ Եթէ ւարտած ես միջնակարգի 9րդ դասարանը, դիմացդ կը բացուի NURSINGի ասպարէզը: Լաւագոյն ասպարէզը, լաւագոյն վճարումով, անմիջական գործի ապահովումով: Մեծ է պահանջը, քանի որ իրաքանչիւր 16 բժիշկի՝ ՄԷԿ հիւանդապահուի: ԾԱՆՕԹ... Առաջին տարուան համար պիտի ընդունուին սահմանափակ թիւով աշակերտներ: Արձանագրութիւն՝ ամէն օր: ՓՕԼԻԿԼՈՒԹ ԲՈԼԷՃ... Տորա՛ հեռ. 01/251320